

<i>Համարը</i> N 1301-Ն	<i>Տեսակը</i> Մայր
<i>Տիպը</i> Որոշում	<i>Կարգավիճակը</i> Գործում է
<i>Սկզբնաղբյուրը</i> ՀՀՊՏ 28.11.07./58(582) Հոդ.1188	<i>Ընդունման վայրը</i> Երևան
<i>Ընդունող մարմինը</i> ՀՀ կառավարություն	<i>Ընդունման ամսաթիվը</i> 08.11.2007
<i>Ստորագրող մարմինը</i> ՀՀ Վարչապետ	<i>Ստորագրման ամսաթիվը</i> 16.11.2007
<i>Վավերացնող մարմինը</i>	<i>Վավերացման ամսաթիվը</i>
<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</i> 08.12.2007	<i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i>

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎՏԱՆԳ ԱՌԱՋԱՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՄԱՀԱՑԱԾՆԵՐԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԻԱԿԻԶՄԱՆ, ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՎՆԱՄԱԶԵՐԾՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՈՒ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՈՒ ՎՐԱՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 նոյեմբերի 2007 թվականի N 1301-Ն

ՄԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎՏԱՆԳ ԱՌԱՋԱՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՄԱՀԱՑԱԾՆԵՐԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԻԱԿԻԶՄԱՆ, ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՎՆԱՄԱԶԵՐԾՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՈՒ ՎՐԱՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության, 3-րդ մասի, 23-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝

1) սանիտարահամաճարակային իրավիճակի վտանգ առաջանալու դեպքում մահացածների մարմինների դիակիզման, գերեզմանատների վնասազերծման և տեղափոխման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) վրահուղարկավորման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ս. Սարգսյան

2007 թ. նոյեմբերի 16
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2007 թվականի
նոյեմբերի 8-ի N 1301-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎՏԱՆԳ ԱՌԱՋԱՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՄԱՀԱՑԱԾՆԵՐԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԻԱԿԻԶՄԱՆ, ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՎՆԱՄԱԶԵՐԾՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են սանիտարահամաճարակային իրավիճակի վտանգ առաջանալու դեպքում մահացածների մարմինների դիակիզման, գերեզմանատների վնասազերծման և տեղափոխման հետ կապված

հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով սանիտարահամաճարակային իրավիճակի վտանգ առաջանում է՝

1) I-II խմբերի միկրոօրգանիզմներով հարուցված հիվանդություններից մահացածների հուղարկավորության դեպքում:

2) արտակարգ իրավիճակների ժամանակ (երկրաշարժեր, ջրհեղեղներ, սողանքներ և այլն), երբ գերեզմանատունը ենթարկվում է խախտման, ինչի արդյունքում կարող է առաջանալ աճյունի ամբողջականության վնասում և վարակի տարածման վտանգ:

3. Սույն կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում գերեզմանատունն ամբողջությամբ կամ դրա վնասված հատվածը ենթակա է վնասագերծման, փակման և աճյունների տեղափոխման:

4. Գերեզմանատան վնասագերծման, աճյունի տեղափոխման, վերահուղարկավորման (դիակիզման) աշխատանքները կազմակերպվում են տարածքային կառավարման և տեղական ինքակառավարման մարմինների կողմից՝ համաձայն «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի՝ կազմելով հանձնաժողովներ, որոնց կազմերում ընդգրկվում են պետական կառավարման լիազոր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և համապատասխան համայնքի (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) ներկայացուցիչները: Հանձնաժողովն ընդունում է որոշում գերեզմանատան վնասագերծման, աճյունի տեղափոխման, վերահուղարկավորման (դիակիզման) միջոցառումների մասին և տեղեկացնում գերեզմանատանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշման համաձայն հաշվառված գերեզմանատեղերի (գերեզմաններ) հուղարկավորությունն ստանձնած անձանց: Հանձնաժողովի գործունեության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը:

5. Գերեզմանատան փակումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ներկայացրած առաջարկության հիման վրա:

6. Տվյալ գերեզմանատանը մարդու համար ախտածնության I-II խմբերի միկրոօրգանիզմներով հարուցված հիվանդություններից մահացածների աճյունների բացակայության դեպքում՝ հողի, ջրի մակերևույթին հայտնված դիակները տեղափոխվում են այլ գերեզմանատուն և թաղվում ինչպես այլ դիակներ (վերջիններիս վրա չի տարածվում ախտածնության I-II խմբերի միկրոօրգանիզմներով հարուցված հիվանդություններից մահացածների դիակների հուղարկավորմանը կամ դիակիզմանը, գերեզմանատների վարակագերծմանը և տեղափոխմանը ներկայացվող պահանջները):

7. Այն դեպքերում, երբ առկա են տվյալներ նախկինում տվյալ գերեզմանատանը մարդու համար ախտածնության I-II խմբերի միկրոօրգանիզմներով հարուցված հիվանդություններից մահացածների աճյունների թաղված լինելու մասին, ապա գերեզմանատան տարածքը վնասագերծվում է որպես մարդու համար ախտածին միկրոօրգանիզմներով վարակված օբյեկտ:

8. Ախտածնության I-II խմբերի միկրոօրգանիզմներով հարուցված հիվանդություններից մահացածի դիակը դիակիզվում է:

9. Դիակների հետ շփման մեջ եղած գործիքները, անձնակազմի պաշտպանիչ հագուստը և բոլոր առարկաները, ինչպես նաև փոխադրամիջոցը, որով տեղափոխվել է դիակը, ենթակա են մանրազնի վարակագերծման՝ որպես մարդու համար ախտածին միկրոօրգանիզմներով վարակված օբյեկտ:

10. Մարդու համար ախտածնության I-II խմբերի միկրոօրգանիզմներով հարուցված վարակներից մահացած մարդկանց դիակները տուն չեն տեղափոխվում:

11. Դիակի տեղափոխումը դիակիզարան իրականացվում է ամուր փակվող փայտյա դագաղով, որը ներսից պատված է մոմլաթով: Դիակային հեղուկի արտահոսքը կանխելու նպատակով մոմլաթում կարերը պետք է լինեն վերից վար և գտնվեն դագաղի կողմնային մասերում: Դիակը պետք է փաթաթված լինի ախտահանիչ լուծույթով ներծծված գործվածքով: Դիակը տեղափոխվում է դիակիզարան ցանկացած դիատարով: Դիակիզման արարողությունից առաջ արգելվում է դագաղի բացումը:

12. Դիակիզումը կատարվում է ընդհանուր դիակիզարաններում՝ տեղափոխելուց անմիջապես հետո՝ դագաղի հետ միասին: Դիակիզումից հետո ստացված մոխիրն ամփոփվում է աճյունասափորի մեջ և տեղադրվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշմամբ սահմանված թաղման և դիակիզման կարգի համաձայն:

13. Սույն կարգի համաձայն դիակիզումն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում

դիակիզարաններ կառուցելուց և դրանք գործարկելուց հետո:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2007 թվականի
նոյեմբերի 8-ի N 1301-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՎՐԱՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է վրահուղարկավորման կազմակերպման կարգը:

2. Մահացածի հարազատների ցանկությամբ՝ իրենց պատկանող գերեզմանում վրահուղարկավորումն իրականացվում է տվյալ գերեզմանում նախկինում մահացածի թաղումից առնվազն տասնհինգ տարի հետո՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշմամբ սահմանված կարգով:

3. Վրահուղարկավորումը թույլատրում է գերեզմանատան տնօրինությունը՝ մահացածի հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի դիմումի, մահվան վկայականի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կողմից տրված վրահուղարկավորում իրականացնելու հնարավորության մասին եզրակացության հիման վրա:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կողմից վրահուղարկավորում իրականացնելու հնարավորության մասին եզրակացությունը տրվում է անվճար, մեկ օրվա ընթացքում, մահացածի հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի դիմումի, մահացածի մահվան վկայականի, նախկինում մահացածի մահվան վկայականի և գերեզմանի վկայականի (առկայության դեպքում) հիման վրա:

5. Չի թույլատրվում վրահուղարկավորում կատարել, եթե՝

1) նախկինում մահացածի աճյունը հուղարկավորվել է ցինկապատ, հերմետիկ զոդված դագաղով.

2) նախկինում մահացածի կամ վրահուղարկավորման ենթակա մահացածի մահվան պատճառը եղել է մարդու համար ախտաճնության I-II խմբերի միկրոօրգանիզմներով (Ժանտախտի, խոլերայի, դեղին տենդի) հարուցված վարակներից որևէ մեկը:

6. Վրահուղարկավորումը թույլատրվում է միայն բաց և մասնակի փակ գերեզմանատներում:

7. Աճյունասափորը (մահացածի մարմնի դիակիզումից հետո) ընտանեկան գերեզմանում՝ վրահուղարկավորման միջոցով տեղադրելու համար հատկացվում է նախկինում մահացածի գերեզմանի տարածքից 1 քառ. մետր տարածք:

8. Գերեզմանատան տնօրինությունը մահվան վկայականի հիման վրա թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանում և գերեզմանի վկայականում կատարում է համապատասխան գրանցումներ վրահուղարկավորման մասին:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան